

Ի Ղ Զ . . .

(ԱՂԲԻԻՐԻ ՄԸ ԳԼԽԻՆ...)

Կ'ուզէի որ սիրտըս ըլլար հոգէ մէկ կուժ
 Զրով լեցուն, ուսին վրայ սա՛ կոյսերուն.
 Ու գիւզէ՛ գիւզ, եւ տունէ՛ տուն շրջէր աշխոյժ,
 Քիչ մը գով տար ծարաւահար շրթունքներուն...

Կ'ուզէի որ ըլլայի՛ ես բոժոժ մ'արծաթ՝
 Վզէն կախուած ազնուական սա հեգ ուղտին.
 Կարաւանին հետ մեկնէի դէպ՝ անապատ
 ...Փնտրուելու Ապուլ Ա՛լա էլ-Մաարրին...:

Կ'ուզէի որ հոգիս ըլլար մե՛ծ շիրմաքար՝
 Սա՛ քողովուած հողակոյտին վրայ օտար.
 Հակատըս կից՝ մահու չափ ցուրտ՝ իր փակատին՝

Արտասուէի՛ եղբայրօրէն, գորովագի՛ն
 Երկրի բոլոր մեռելներուն վրայ անտէր.
 Ու մեռելի՛ն սրտիս մէջի՛ անպատանֆ դե՛ռ...:

Թաւալապիյէ

ՄԻՀՐԱՆ